րաց կալ մօտն», Ազարիա որ աշակերտած էր նախապէս «Ղղմուկ» կոչուած Մկրտիչ վարդապետին, «երկիւղէ եւ տրտիզանաց կեսարացոյ Գրիգորին եղեալ ի նմանէ եւ գնացեալ մօտ ի Գրիգորն, կացեալ բազում ժամանակս եւ ուսեալ զամենայն հանճարս իմաստից եւ այնպիսս յանախապատում խրթնամարդ ասաց, [որ] ոչ ոք եղեալ է այժմոյս, որ ի մեկ բանից վերայ մեկ ամիս խարդէր զՅովհաննու Որոտնեցւոյ մեկնեալն եւ եր յոյժ պահեցող եւ առաքինի, խոնարհամիտ, հեզ եւ հլու, որ առաւել խոնարհ հոգի չիներում, զմականնումն Հոյ հին եղեալ: Եւ եր անձամնիր խարդող, որ ժամանակ մի յուսատրեց զՈւրայոյ կողմն, զնիկիոյ եւ զնիկոմիդացոց ուր Հայք կան» (Դասընդէր, էջ 410–411):

Դարանաղցի «կացեալ բազում ժամանակս եւ ուսեալ զամենայն հանճարս իմաստից» բառերը օրոնք Թերեւս ակամայ փախած են կողմնակալ պատմիչին ձեռքէն, — ի բաց թողլով անձնական առաքինի կեանքին ակնարկները — արդեօ՞ք ինքնին զուարճալի մը չեն իր վարդապետին՝ Գրիգոր կեսարացիի համար, որ այսպիսի աշակերտներ կը հասցնէ:

Ազարիա, որ Մովսէս Տարեւացիի աշակերտակիցը եղած է, 1609ին մտած է Գրիգոր կեսարացիի աշակերտութեան: